

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Լևոն Մկրտչյան-ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն՝
Արսեն Ստեփանյան-ից

ք. Երևան, Ազատության 27, 3-րդ հարկ, 201014 (101) arsen.stepanyan@savethechildren.org

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն, N 01Բ199590

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչությունը ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության պետական գրանցման վկայականի պատճենը,
2. «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության վերջին 2 տարում ծավալած գործունեության համառոտ նկարագիրը,
3. Մոտիվացիոն նամակ հանրային խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ,
4. Վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում «Սեյվ դը չիլդրեն»-ի կազմակերպության իրականացվող քաղաքականության վերաբերյալ հարյուր վերյուրսուն:

Դիմող՝

03

Armen Stepanyan
Armen Stepanyan



10876-16
04 05 16

**«Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության մտտիվացիոն նամակը ՀՀ ԿԳՆ նախարարին կից
հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ**

«Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը ողջունում է ՀՀ կրթության և գիտության նախարարի նախաձեռնությունը նախարարի ապարատին կից հասարակական խորհուրդ ձևավորելու ուղղությամբ: Մենք բարձր ենք գնահատում ՀՀ կրթության և գիտության նախարարության պատրաստակամությունը համագործակցելու քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ: Համագործակցությունը չափազանց կարևոր է մեր կարողությունները առավելագույնին հասցնելու ինչպես նաև որակյալ և մատչելի կրթություն բուրք երեխաներին ապահովելու գործում: Հայաստանում մենք գործընկերային հարաբերություններ ենք կառուցել երեխաների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, համայնքների, պետական և մասնավոր հատվածի հետ:

«Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը հաստատել է իր ներկայությունը Հայաստանում 1993 թվականին և այդ ժամանակից ի վեր ցուցաբերել է օգնություն առավել խոցելի երեխաներին և նրանց ընտանիքներին՝ վերականգնման և զարգացման ծրագրերի շրջանակներում: Առողջապահության, կրթության և սոցիալական ոլորտի կենսականորեն կարևոր նախաձեռնությունների շնորհիվ բարելավվել են ամենաաղքատ բնակչության հիմնական կենսապայմանները՝ համայնքային ծրագրերի և տեղական գործընկերների ու հաստատությունների կարողությունների զարգացման միջոցով:

Իր գործունեության առանցքը համարելով կրթությունը՝ «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը սերտորեն համագործակցել և շարունակում է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ: Երկկողմանի համագործակցությունը ամրագրվել է տարբեր ծրագրերի շրջանակներում կնքված համագործակցության հուշագրերում, կրթության ոլորտի քաղաքականությունների մշակման, կիրառման, խորհրդատվության տրամադրման գործընթացներում: 2015 թվականից մենք ակտիվ գործունեություն ենք ծավալել՝


- կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիրը մշակման գործընթացին մասնակցելու ,
- նախադպրոցական կրթության զարգացման նոր պետական ռազմավարության մշակման աջակցելու ,
- երեխաների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին խթանելու,
- վաղ մանկության խնամքի և կրթության մատչելիության ու որակի ապահովման շուրջ,
- առողջ ապրելակերպի, դպրոցական առողջության շուրջ,
- աղետներին դիմակայելու՝ կրթական հաստատությունների, անձնակազմի և երեխաների, ներառյալ հատուկ կարիքներով երեխաների պատրաստվածությունը բարձրացնելու շուրջ,
- հաշմանդամություն ունեցող երիտասարդների միջին մասնագիտական կրթության և զբաղվածության հնարավորությունների շուրջ:

Վերոնշյալ ոլորտներում էլ ավելի սերտ համագործակցելու, տեղեկատվություն, փորձառություն փոխանակելու նպատակով «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը ցանկանում է անդամակցել ՀՀ ԿԳՆ նախարարին կից նորաստեղծ հասարակական խորհրդին: Մենք պատրաստակամ ենք, կազմակերպության հնարավորության սահմաններում, տրամադրել ցանկացած աջակցություն՝ երեխաների մասնակցությունն այս խորհրդում ապահովելու նպատակով:

Վստահ ենք, որ մենք միասին կարող ենք Հայաստանի երեխաների համար ապահովել ավելի հասանելի, որակյալ և կայուն կրթական հնարավորություններ:

Արսեն Ստեփանյան

«Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության
հայաստանյան ներկայացուցչություն



Իրավաբանական անձի արտանմանցված ստորաբաժանման,
հիմնարկի պետական հաշվառման

ՎԿԱՅԱԿԱՆ N 01Բ199590

«ՍԵՅՎ ԴՇ ԶԻԼԴՐԵՆ ԻՆՔԵՐՆԵՆԼԻ»-Ի ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ
ՆԵՐԿԱՅԱՏՈՒՑՉՈՒՔՅՈՒՆ

Հաշվառված է Պետական ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից

Հաշվառման համարը 211.060.49590

Հաշվառման ամսաթիվը 2011-10-20

Օճակագիրը(կոդ) 41370128

Հարկ վճարողի հաշվառման համար 02251537

Ապահովարդի ծածկագիր 069590

Իրավաբանական անձի տեսակը ոչ առևտրային

Գործունեության ժամկետը անժամկետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ



(ստորագրություն)

22.10.2011 թ.

Կ.Տ.

Վկայական ուժի մեջ է միայն ռեգիստրի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 003

Իրավաբանական անձի արտանմանցված ստորաբաժանման,
հիմնարկի հաշվառման
N 01Բ199590 վկայականի


Արտանմանցված ստորաբաժանման, հիմնարկի անվանումը «ՍԵՅՎ ԴՇ
ԶԻԼԴՐԵՆ ԻՆՔԵՐՆԵՆԼԻ»-Ի ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ
ՆԵՐԿԱՅԱՏՈՒՑՉՈՒՔՅՈՒՆ

Հիմնարկի անվանումը ՍԵՅՎ ԴՇ ԶԻԼԴՐԵՆ ԻՆՔԵՐՆԵՆԼԻ
Գտնվելու վայրը ԱԶԱՏՈՒՔՅԱՆ ՊՈՂ. / 27 / 3-Ի ԿԱՐԿ Ք.ԵՐԵՎԱՆ
0014 ՀԱՅԱՍՏԱՆ

Իրավաբանական անձի արտանմանցված ստորաբաժանման,
հիմնարկի ղեկավար ՏԻՐԵՆ ԻՐԻՆԱ ՍԱՊՈՂԱՆ
անձնագիր AM0273341, տղվ. 2011-04-22, 011 փողմից, հասցե
փ. Դեմիրճյան / 2.17 / Բն.7. ք. Երևան 0002 ՀԱՅԱՍՏԱՆ

Այլ տեղեկություններ Կանոնադրության փոփոխության և
լրացման (հասցեափոխություն) հաշվառում:
Փոփոխություն(ներ)ը հաշվառվել է(են) 2013-02-19-ին

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ




(ստորագրություն)

22.10.2011 թ.

Ներդրում ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

«Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության նպատակն է տեղական փոփոխություններ մտցնել երեխաների կյանքում: Կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը հիմնվել է 1993թ.: Այդ ժամանակից ի վեր իրականացվել են մարդասիրական և զարգացողական բնույթի մի շարք ծրագրեր՝ ի նպաստ երեխաների և նրանց ընտանիքների: Մտորն ներկայացված են կազմակերպության կողմից 2014-2016թթ.-ի ընթացքում իրականացվող ծրագրերի համառոտ նկարագիրը:



«Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագիր -2»-ը (2014-2015) միտված է նվազեցնելու հատուկ կարիքներով երեխաների խոցելիությունը աղետների նկատմամբ: Այդ նպատակով քայլեր են իրականացվում խոցելի խմբերի երեխաների իրավունքներն ու կարիքները աղետների ռիսկի նվազեցման քաղաքականության մեջ արտացոլելու, աղետներին առավել հակված շրջաններում հնարավոր աղետների նկատմամբ երեխաների և կրթական հաստատությունների պատրաստվածությունը բարձրացնելու, ինչպես նաև

ազգային կրթական համակարգում աղետների ռիսկի նվազեցման խնդիրները ներառելու շուրջ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության վարչության կողմից՝ Աղետներին պատրաստման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում: 2016թ-ին մեկնարկել է ծրագրի IV փուլը, որի ընթացքում «Մեյվ դը չիլդրեն»-ը կատեղծի անվտանգ միջավայր հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների համար՝ ներառական ԱՌՆ ծրագրի իրականացման համար ինտեգրելով նորարարական և կայուն արդյունավետ մոտեցումներ ազգային արդյունավետ քաղաքականությունում, ազգային կրթական համակարգերում և իրազեկության բարձրացման ռազմավարություններում հանուն երեխաների և լայն հանրությանը:

Հայաստանում ավելի քան 3600 երեխա գտնվում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, մինչդեռ ինստիտուցիոնալացման վնասակար հետևանքները երեխայի համար միջազգայնորեն քաջ հայտնի են: Մանկատներում և գիշերօթիկ հաստատություններում տեղավորված երեխաների մոտ ավելի մեծ է առողջական խնդիրներ, շարժողական հմտությունների զարգացման, լսողական ու տեսողական խնդիրներ, իմացական և սոցիալական դժվարություններ ունենալու հավանականությունը: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» (2014-2017) նպատակն է հզորացնել ընտանիքի փոխարինման ծառայության





համակարգը՝ զարգացնելով խնամատարության համակարգը, ընդլայնելով խնամատար ընտանիքների տեսակներն ու հիմնելով խնամատար ընտանիքների աջակցության, մշտադիտարկման և վերահսկման համակարգ: Ծրագրի շրջանակներում 80 երեխա կտեղավորվի խնամատար ընտանիքներում: Առաջնություն կտրվի ներկայումս մանկատներում և գիշերօթիկ հաստատություններում գտնվող երեխաներին, թեև կարող են ներառվել նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված այլ երեխաներ, որով

կկանխվի նրանց մանկատուն կամ գիշերօթիկ հանձնելը:

«Փախստականների ներուժի զարգացման և կենսամակարդակի բարելավման ծրագիրը» (2014-2016) նպատակ ունի արձագանքել Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված անձանց առջև ծառայած խնդիրներին: Ծրագիրն իրականացվում է Երևանում ու մոտակա մարզերում: Այն նպաստում է Սիրիայից տեղահանված անձանց բարեկեցությանը՝ խթանելով նրանց հմտությունները, մասնակցությունը, ինտեգրումն ու ներուժի զարգացումը: Աշխատանքային շուկայում պահանջարկ ունեցող հմտությունների զարգացումը ծրագրի առաջնահերթ ռազմավարական խնդիրներից է: Բացի այդ, ծրագիրն առաջնային է համարում տեղահանված ընտանիքների եկամտի բարձրացումն ու նրանց ակտիվ մասնակցությունը տեղական մակարդակում իրենց շահերի պաշտպանությանը: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Բնակչության, փախստական-ների և միգրացիայի վարչության ֆինանսավորմամբ:

Սիրիայից տեղահանված անձանց ինտեգրմանը նպաստող մեկ այլ նախաձեռնություն է **«Փախստականների ինտեգրման խթանում՝ կրթության և կարողությունների զարգացման միջոցով»** ծրագիրը (հունվար-դեկտեմբեր 2015): ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ֆինանսավորած այս ծրագրի շրջանակներում կուսումնասիրվեն փախստականների ինտեգրմանը խոչընդոտող հանգամանքները և կջատագրվի նրանց ներգրավումը հասարակության մեջ: Բացի այդ, տեղահանված երեխաները կներառվեն տեղական մշակութային և սպորտային դասընթացներում, նրանց համար կանցկացվեն հայերեն լեզվի դասընթացներ, իսկ բուհերի ուսանողների համար կապահովվեն աշխատանքային պրակտիկայի հնարավորություններ՝ դեպի աշխատաշուկա նրանց մուտքը հեշտացնելու նպատակով: Ծրագիրը կնպաստի նաև երեխայի պաշտպանության խթանմանը՝ անմիջապես փախստական երեխաների հետ աշխատանքի միջոցով:



«Սիրիայից տեղահանված երեխաների և նրանց ընտանիքների ինտեգրման խթանումը Հայաստանում» ծրագրում **«Մեյվ դը չիլդրեն»**-ի նպատակն է աջակցել փախստականներին, նրանց երեխաներին և երիտասարդներին ինտեգրվել կրթական և արտադպրոցական գործունեություններում՝ ցուցաբերելով ակտիվ

մասնակցություն, օգնել բարձրացնել խնամատարների և ծառայություն մատուցողների կարողությունները՝ փախստականների և տեղահանված երեխաների կարիքներին ավելի լավ արձագանքելու համար: Ծրագիրը միտված է օգնելու Հայաստան եկող փախստականներին, առանց սեփական մշակույթը կորցնելու, ինտեգրել տեղական մշակույթին: Այս ծրագիրը համընթաց է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի՝ մեր երկրի համար մշակած ծրագրային ռազմավարության հետ, որը մշակվել է փախստականների իրավիճակի վերլուծության և կարիքների գնահատումից հետո:

Կազմակերպության ծրագրերի մեկ այլ կարևոր ուղղություն է դպրոցական առողջության և սննդի ծառայությունների ու վարքագծի բարելավումը, որն իրականացվում է «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի (2011-2016) շրջանակներում՝ դպրոցներում սանհանգույցների հիմնման, ծնողների ու ծառայություն մատուցողների գիտելիքներն ու հմտությունները խթանելու և դպրոցական առողջության ստանդարտների ու քաղաքականության մշակման միջոցով: Բացի այդ, մասնակցային մեթոդների կիրառման միջոցով խթանվում են երեխաների գիտելիքներն ու վերաբերմունքն առողջության և սննդի նկատմամբ:



«Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը մեծապես կարևորում է երեխաների վաղ մանկության զարգացումը և գտնում է, որ նախադպրոցական որակյալ ծառայությունների առկայությունը նպաստում են նախադպրոցական տարիքի երեխաների համակողմանի զարգացմանը և խնամքին: Նախադպրոցական կրթությունը շարունակական կրթության համակարգի սկզբնական և շատ կարևոր բաղադրիչներից է: Սա գիտակցելով 2011թ.-ից ի վեր ծրագրի շրջանակներում հիմնովին վերանորոգվել և կահավորվել են 19 դպրոցահեն նախակրթարաններ, 3 սպորտ դահլիճներ և 38 դպրոցի սանհանգույցներ Հայաստանի 19 գյուղական և քաղաքային համայնքներում: Նախադպրոցական որակյալ ծառայությունները հասանելի դարձան ավելի քան 2000 երեխաների համար, ԿԱԻ-ի մասնագետի կողմից 45 ուսուցիչներ վերապատրաստվել են այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կարճաժամկետ ուսուցման դասընթացի մոդուլով և ավելի քան 4500 աշակերտներ վարում են առողջ ապրելակերպ իրենց համայնքներում և դպրոցներում:

«Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր - Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ֆինանսավորվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրը, որը մեկնարկել է 2015թ.-ին, նպատակադրված է նպաստելու Հայաստանում երեխա ունենալը սեռով պայմանավորելու մշակույթի փոփոխությանը և հղիության ընթացքում կանխակալ ընտրության ցուցանիշների մակարդակի նվազեցմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է գրանցել 15% դրական փոփոխություն բնակչության գիտելիքների, վերաբերմունքի և ընկալման մեջ, ինչպես նաև 10 % կրճատում՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների քանակը:

ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորած «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (Livelihood Improvement through Fostered Employment - LIFE) ծրագիրը նպատակ ունի խթանել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հավասար պայմանները և աշխատանքի մատչելիությունը՝ որպես մարդու հիմնարար իրավունք: ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիրը մեկնարկել է 2012թ.-ին և ուղղված է ՀՀ բոլոր մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար մասնագիտական կրթությանն ու աշխատանքի հավասար պայմանների ապահովմանը: Մինչ օրս գիշերօթիկ և հատուկ դպրոցների 600 սաներ մասնակցել են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներին, 900-ից ավելի երիտասարդներ ստացել են կարճաժամկետ ուսուցում, իսկ 256 երիտասարդներ շարունակում են իրենց մասնագիտական կրթությունը միջին մասնագիտական/արհեստագործական կրթական հաստատություններում, իսկ հաշմանդամություն ունեցող ավելի քան 548 անձինք գտել են իրենց զբաղվածությունը:

«Համայնքապետական ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» ծրագիրն իրականացվելու է «Մեյվ դը չիլդրենի» կողմից՝ «Լիարժեք կյանք» և «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Ծրագրի շրջանակներում Երևան և Արմավիր քաղաքներում կհիմնվեն անկախ կյանքի և զարգացման



կենտրոններ, որտեղ Երևանից, Արմավիրի և Արագածոտնի մարզերից հաշմանդամություն ունեցող 300 երեխաներ հնարավորություն կունենան ստանալ որակյալ ծառայություններ: Ծրագրի հիմնական շահառուներն են հաշմանդամություն ունեցող 0-18 տարեկան երեխաներն ու իրենց ընտանիքները:

«Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» ծրագիրը մեկնարկել է 2016թ. հունվար ամսին

և նպատակ ունի նպաստել Հայաստանի նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական (ՄԿՈՒ) ուսումնական ոլորտում սոցիալական նորարարությունների ներմուծմանը՝ խթանելու հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար աշխատանքի հավասար հնարավորությունների ստեղծումը՝ որպես մարդու հիմնարար իրավունք: Մինչ 2018թ. նախատեսվում է Երևանում, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում իրականացնել մի շարք գործողություններ, որոնք ուղղված կլինեն ՄԿՈՒ հաստատությունների դասախոսական կազմի ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը ներառական կրթություն ապահովելու գործում, հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթությանը, ինչպես նաև ՄԿՈՒ որոշ հաստատություններում կարճաժամկետ մասնագիտական դասընթացների կազմակերպմանը և սոցիալական ձեռնարկությունների ստեղծմանը:



Կրթության ոլորտում «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի համառոտ նկարագրությունը

1993 թվականից ի վեր Հայաստանում «Մեյվ դը չիլդրեն»-ն իրականացրել է 900 ծրագիր Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի 500 համայնքներում, ի նպաստ ավելի քան 440000 երեխաների: Մենք աշխատել ենք երեխաների պաշտպանության, առողջապահության, կրթության և սոցիալական բնույթի այլ ոլորտներում՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը և սերտորեն համագործակցելով 22 պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

Ներկայումս մեր կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության», «Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագիրը», և «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE), «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար», «Միրիայից տեղահանված երեխաների և նրանց ընտանիքների ինտեգրման խթանումը Հայաստանում» ծրագրերն առնչվում են կրթության ոլորտին: Ստորև ներկայացված ենք ծրագրերի համառոտ նկարագրությունները:

1. «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագիր 2011-2016թթ.

- Ստեղծվել, հիմնովին վերանորոգվել և կահավորվել են 19 դպրոցահեն նախակրթարաններ, 3 սպորտ դահլիճներ և 38 դպրոցի սանհանգույցներ Հայաստանի 19 գյուղական և քաղաքային համայնքներում,
- Նախադպրոցական որակյալ ծառայությունները հասանելի դարձան ավելի քան 2000 երեխաների համար,
- ԿԱԻ-ի մասնագետի կողմից 45 ուսուցիչներ վերապատրաստվել են այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կարճաժամկետ ուսուցման դասընթացի մոդուլով,
- Ավելի քան 4500 աշակերտներ վարում են առողջ ապրելակերպ իրենց համայնքներում և դպրոցներում:

2. «Աղետների ռիսկերի նվազեցման ներառական ծրագիր – 2» ծրագիր, 2014թ. մայիս- 2017թ. փետրվար

Երևանի, Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի 62 հաստատություններում՝ 21 հատուկ, 20 ներառական դպրոցներում և 21 մանկապարտեզներում իրականացվել են՝

- Վերապատրաստումներ ուսուցիչների և դաստիարակների համար,
- Մշակվել են «Աղետների ռիսկի նվազեցման» թեմայով 3 կրթական և ուսուցողական նյութեր,
- Իրականացվել են փոքրամասշտաբ ուսումնական վարժանքներ 3, 773 աշխատակիցների և 24, 145 երեխաների մասնակցությամբ,
- Շահառու հաստատություններին տրամադրվել են կրակմարիչներ, հակահրդեհային վահանակներ, տարհանման համար նախատեսված ուղղորդող նշաններ, առաջին օգնության պայուսակներ
- Տեղադրվել է լուսաձայնային ազդարարման 41 համակարգ, պատգարակներ, հակագազներ, լապտերներ, վրաններ, մեզաֆոններ, տաք ծածկոցներ,



- Փոխվել են տարհանման համար նախատեսված երկրորդական ելքերի դռները:
- 2016-2017թթ. իրականացվելու են հետևյալ գործողությունները՝
- Համագործակցության հաստատում Կրթության ազգային ինստիտուտի հետ /ներառական ԱՌՆ թեման ընդգրկել ուսուցիչների վերապատրաստման տարեկան մոդուլի մեջ/
- Պետական կառույցների կարողությունների զարգացում ներառական ԱՌՆ թեմայով:

3. «Կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիր 2012-2015թթ.

- «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ-ի հետ համագործակցությամբ զարգացրել է Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի 44 ՄԿՈՒ հաստատությունների 880 դասախոսների և վարչական աշխատողների կարողությունները՝ նրանց ներկայացնելով ներառական կրթություն կազմակերպելու և ներառական միջավայր ապահովելու ժամանակակից սկզբունքները:

4. «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» ծրագիր 2016-2017թթ.

- Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերի և Երևանի 46 ՄԿՈՒ հաստատություններ ներկայացնող ավելի քան 750 ուսուցիչներ կբարելավեն ներառական կրթության մոտեցումներին տիրապետելու և ներառական միջավայր ապահովելու իրենց կարողությունները,
- ՄԿՈՒ 5 հաստատություններ կհիմնադրեն պիլոտային սոցիալական ձեռնարկություններ

5. «Միրիայից տեղահանված երեխաների և նրանց ընտանիքների ինտեգրման խթանումը Հայաստանում» ծրագիր, 2016թ.

- Երևանի 5 դպրոցներում 90 դպրոցահասակ երեխաների համար կազմակերպվում են երկարօրյա դասընթացներ մայրենի և ռուսաց լեզվի առարկաներից,
- «Հանդուրժողականության ուսուցում» թեմայով դասընթացների անցկացում ուսուցիչների և տարրական դասարանի երեխաների համար,
- 115 աշակերտներ ներգրավված են Երեխան երեխայի համար մեթոդով հանդիպում-քննարկումներին,
- 102 կրթաթոշակ է տրամադրվել սիրիահայ երեխաներին՝ նպաստելով նրանց մշակութային և սպորտային կյանքի զարգացմանը,
- Նպաստել Միրիայից տեղահանված երեխաների կրթական և մշակութային դաստիարակությանը՝ փոքրիկ կրթաթոշակային ծրագրերի շնորհիվ:

5.1 Փախստականների ներուժի զարգացում և կենսամակարդակի բարելավում, 2014-2016թթ.

- 1 մանկապարտեզի և 2 դպրոցահեն նախակրթարանների հիմնում, վերանորոգում և կահավորում Երևան քաղաքում,
- Հայաստանի պատմա-մշակութային վայրերի հետ ծանոթացում՝ ավելի քան 500 երեխաների համար շրջայցեր կազմակերպելով,
- Կրթաթոշակների տրամադրում սիրիահայ երիտասարդներին:

Իրավաբանական անձի արանձնացված ստորաբաժանան,
Իրնարիկ Կետակյան հաշվառման

ՎԿԱՅԱԿԱՆ N 01P199590

«ԱՅՅՎ ՂԸ ՉԻԼՂԻՆ ԻՆՔԵՐՆԵՇՆԼ»-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒՔՅՈՒՆ

Հաշվառված է Պետական ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից

Հաշվառման համարը 211.060.49590

Հաշվառման ամսաթիվը 2011-10-20

Ծածկագիրը(կող) 41370128

Հարկ վճարողի հաշվառման համար 02251537

Ապահովագրի ծածկագիր 069590

Իրավաբանական անձի տեղակը ոչ առևտրային

Գործունեության ժամկետը անժամկետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"20" 10 2011 թ.

Կ.Տ.

Վկայական ուժի մեջ է մտնում ներքինի հետ միասին

ՆԵՐՂԻՐ 004

Իրավաբանական անձի արանձնացված ստորաբաժանան,
Իրնարիկ հաշվառման
N 01P199590 վկայականի

Արանձնացված ստորաբաժանում, Իրնարիկ անվանումը «ԱՅՅՎ ՂԸ
ՉԻԼՂԻՆ ԻՆՔԵՐՆԵՇՆԼ»-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒՔՅՈՒՆ

Հիմնադրամասնում մեզ ինչպիսիքն ինքնուրույն

Գտնվելու վայրը

Իրավաբանական անձի արանձնացված ստորաբաժանան
Իրնարիկ ռեգիստր ՏՍՈՐԵՆ ԱՐՍԵՆ ԱՅԵՓԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ
առնագիր AM0775675, կողմ 2012-06-20, 048 կողմից, հասցե
ԳՈՐԿՈՒՅ ՆՐԵՒՏ 7 / ԲՆ.7 ԱՐՄԱՎԻՐ 0905 ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆ

Այլ տեղ գտնվող ներքին տնտեսի մասին
ստորագրությունների հաշվառում:
Փոփոխությունները հաշվառվել է(են) 2014-10-28-ին

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"28" 10 2014 թ.

Վկայական ուժի մեջ է մտնում վկայականի հետ միասին